Համաձայանգիր N ԱՍՀՆ-ՊՈԱԿ-ԲՄԱՊՁԲ-18/1-Լ-1-Գ-5-1

«01» փետրվարի 2018թ. կնքված թիվ N «ԱՍՀՆ-ՊՈԱԿ-ԲՄԱՊՁԲ-18/1-Լ-1-Գ-5» ծածկագրով «Վանաձորի երեխաների խնամքի և պաշտպանության N1 գիշերօթիկ հաստատություն» ՊՈԱԿ-ի կարիքների համար սննդամթերքի գնման պայմանագրում փոփոխություններ կատարելու մասին

ք. Վանաձոր «14» մարտի 2018թ.

«Վանաձորի երեխաների խնամքի և պաշտպանության N1 գիշերօթիկ հաստատություն» պետական ոչ առևտրային կազմակերպությունը, ի դեմս տնօրենի ԺՊ Մ. Ապերյանի, որը գործում է կազմակերպության կանոնադրության հիման վրա, մի կողմից, (այսուհետև՝ Գնորդ) և «Կառա Կարեն» ՍՊԸ-ն, ի դեմս տնօրեն Կ. Ղուկասյանի, որը գործում է կազմակերպության կանոնադրության հիման վրա (այսուհետև՝ Մատակարար), մյուս կողմից, կնքեցին սույն համաձայնագիրը հետևյալի մասին:

Գնորդը և Մատակարարը ղեկավարվելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 15-րդ հոդվածի 6-րդ կետով և հիմք ընդունելով «*ԱՍՀՆ-ՊՈԱԿ-ԲՄԱՊՁԲ-18/1-Լ-1-Գ-5*» ծածկագրով գնման պայմանագրի (այսուհետ՝ պայմանագիր) 8.5-րդ կետը համաձայնության են գալիս պայմանագրում կատարել հետևյալ փոփոխությունները.

1. Պայմանագրի 3.1-րդ կետը շարադրել հետևյալ խմբագրությամբ:

«3.1 Պայմանագրի գինը կազմում է 29 340 /քսանինը հազար երեք հարյուր քառասուն/ ՀՀ դրամ: Պայմանագրի գինը ներառում է պայմանագրի կատարումն ապահովելու նպատակով Վաճառողի կողմից կատարվելիք բոլոր վճարները (ծախսերը), այդ թվում՝ հարկերը, տուրքերը, փոխադրման, ապահովագրման ծախսերը, պարգևավճարները և ակնկալվող շահույթը:

Ապրանքի մատակարարման գինը կայուն է և Վաճառողն իրավունք չունի պահանջել ավելացնելու, իսկ Գնորդը նվազեցնելու այդ գինը»:

2. Պայմանագրով հաստատված N 1 Հավելվածը շարադրել նոր խմբագրությամբ՝ համաձայն Հավելված N 1-ի:
3. Պայմանագրով հաստատված N 2 Հավելվածը շարադրել նոր խմբագրությամբ՝ համաձայն Հավելված N2-ի:
4. Սույն համաձայնագիրը և սույն համաձայնագրով հաստատված Հավելվածները հանդիսանում են պայմանագրի անբաժանելի մասը:
5. Սույն համաձայանգիրն ուժի մեջ է մտնում և կողմերի համար պարտադիր է դառնում կնքելու պահից:
6. Սույն Համաձայնագրի կապակցությամբ ծագած վեճերը լուծվում են բանակցությունների միջոցով: Համաձայնություն ձեռք չբերելու դեպքում վեճերը լուծվում են դատական կարգով:
7. Սույն համաձայնագիրը կազմված է 1 էջից, սույն համաձայնագրով հաստատված Հավելվածները կազմված են 2 էջից: Համաձայնագիրը կազմված է հայերեն լեզվով, կնքվում է 2 օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ և յուրաքանչյուր կողմին տրվում է մեկական օրինակ:

8. ԿՈՂՄԵՐԻ ՀԱՍՑԵՆԵՐԸ, ԲԱՆԿԱՅԻՆ ՎԱՎԵՐԱՊԱՅՄԱՆՆԵՐԸ ԵՎ ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

ԳՆՈՐԴ	ՄԱՏԱԿԱՐԱՐ
«Վանաձորի երեխաների խնամքի և պաշտպանության N1 գիշերօթիկ հաստատություն» ՊՈԱԿ	«Կառա Կարեն» ՍՊԸ
ՀՀ, Լոռու մարզ, ք. Վանաձոր,	ՀՀ Լոռու մարզ, գ. Գուգարք,
Տարոն-4, ՄՄԾ թիվ 23	3 փող., 33 տուն
h/h 1930052041960100	ՀՎՀՀ 06901249
«Կոնվերս բանկ» ՓԲԸ Վանաձորի մ/ճ	«Կոնվերս Բանկ» ՓԲԸ ,
ՀՎՀՀ 06910273	Վանաձորի մ/ճ
Տնօրենի ԺՊ՝ Մ. Ապերյան.....	Հ/Հ 1930008300520100
Կ.Տ. (ստորագրություն	Տնօրեն Կ. Ղուկասյան
	..... Կ.Տ (ստորագրություն)